

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում միգրացիայի և քաղաքացիության ոլորտներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Միգրացիոն քաղաքականությունը Հայաստանի ժողովրդագրական, տնտեսական և ազգային անվտանգության ռազմավարությունների կարևոր մասն է: Գլոբալիզացիայի և տարածաշրջանային մարտահրավերների պայմաններում, մասնավորապես՝ ռուս-ուկրաինական պատերազմի և 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով Լեռնային Ղարաբաղից քաղաքացիների բռնի տեղահանման արդյունքում առաջացած միգրացիոն հոսքերի հետևանքով Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (ՄՔԾ) և դրա իրավանախորդը բախվել էին նշանակալի մարտահրավերների և իրականացրել մի շարք կարևոր փոփոխություններ:

Գլխավոր ձեռքբերումներից են՝ էլեկտրոնային հերթագրման համակարգի ներդրումը և աշխատանքի հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար էլեկտրոնային հարթակի գործարկումը: Այնուամենայնիվ, այս բարեփոխումները ուղեկցվել են նոր խնդիրներով, ինչպիսիք են ոչ աշխատանքի հիմքով կացության և քաղաքացիության դիմումների ներկայացման երկար սպասման ժամկետները: Օրենսդրական փոփոխությունները նպատակ ունեին շտկել իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրները, բայց որոշ նախաձեռնություններ ցույց տվեցին ռազմավարության լուրջ բացեր:

Սույն վերլուծությամբ նաև առաջարկվում են որոշ գործողություններ Հայաստանի միգրացիոն քաղաքականությունը կատարելագործելու համար, ինչը կօգնի ներգրավել որակյալ աշխատուժ, ներդրողներ և այլ «բարձրարժեք» անհատներ՝ նպաստելով մեր երկրի առջև ծառացած ժողովրդագրական և տնտեսական նպատակների իրագործմանը:

Վերջին երեք տարիներին իրականացվող քաղաքականության օրինակներ:

ՄՔԾ-ն նախաձեռնել է մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են եղել հրատապ խնդիրների լուծմանը և օրենքի բացերի լրացմանը: Կարելի է առանձնացնել հետևյալ նախաձեռնությունները՝

Քաղաքացիության ոլորտում քաղաքականության փոփոխություններ

1. Էլեկտրոնային հերթագրման համակարգի ներդրում

- Էլեկտրոնային հերթագրման համակարգի ներդրումը լուծեց ֆիզիկական հերթերի խնդիրը, որոնք ահռելի չափերի էին հասել Ռուսաստանից դիմորդների ներհոսքի հետևանքով: Սակայն այդ փոփոխությունը առաջ բերեց նոր մարտահրավերներ՝ երկար սպասման ժամկետների տեսքով: Օրինակ՝ ներկայումս դիմորդները պետք է մոտ երկու ամիս սպասեն՝ կացության դիմում ներկայացնելու համար, իսկ քաղաքացիության դիմումի համար՝ մոտ վեց ամիս: Այս ժամկետները ցույց են տալիս, որ ՄՔԾ-ն կարող է բարձրացնել իր ռեսուրսների բաշխման կապ ոգտագործման արդյունավետությունը:
- Այս փոփոխություններին զուգահեռ՝ քաղաքացիության դիմումների ուսումնասիրման ժամկետը կրճատվել էր՝ վեց ամսից դառնալով չորս ամիս, ինչը հանրությանը ներկայացվեց որպես նշանակալի ձեռքբերում: Այնուամենայնիվ, հերթագրման կուտակումների պատճառով քաղաքացիություն ստանալու իրական ժամանակահատվածը զգալիորեն երկարել է՝ հաճախ գերազանցելով մեկ տարին:

2. Կեղծ ամուսնությունների կանխարգելման նպատակով լրացուցիչ պահանջների սահմանում

- Նոր կանոններով պահանջվում է, որ օտարերկրացին լինի ՀՀ քաղաքացու հետ երկու տարի գրանցված ամուսնության մեջ և մեկ տարի բնակվի Հայաստանում, կամ ունենա ՀՀ քաղաքացի երեխա: Թեև երկու տարվա ամուսնության պահանջը ողջամիտ է, Հայաստանում բնակության կամ երեխա ունենալու պահանջը չափազանց խիստ է թվում՝ նկատի ունենալով, որ օրենքի նպատակը կեղծ ամուսնությունների դեմ պայքարն էր: Ավելի հավասարակշռված մոտեցում կարող էր լինել լրացուցիչ փաստաթղթեր պահանջելը, եթե կասկածներ կան ամուսնության իրական լինելու վերաբերյալ:
3. **Քաղաքացիություն ձեռքբերման նոր հիմքեր**
- Քաղաքացիություն ստանալու իրավունք է տրվել այն անձանց, որոնց երեխաները կամ ծնողները ՀՀ քաղաքացի են՝ նպաստելով ընտանիքների միավորմանը և կանխելով ընտանիքների բաժանումը:
4. **Անձնագրերի տրամադրում ՀՀ դեսպանատներում**
- Առաջին անգամ ՀՀ քաղաքացիներին հնարավորություն է տրվել անձնագիր ստանալ ՀՀ դեսպանատներում:

Կացության կարգավիճակի տրամադրման ոլորտում քաղաքականության փոփոխություններ

1. **Էլեկտրոնային հարթակ՝ աշխատանքի հիմքով կացության դիմումների համար**
- Էլեկտրոնային հարթակի ներդրումը պարզեցրել է կացության կարգավիճակի դիմումները:
2. **Կամավորության հիմքով կացության կարգավիճակ**
- ՀՀ-ում երկարաժամկետ բնակություն հաստատել ցանկացող կամավորներին կացության կարգավիճակ տրամադրելու հնարավորությունը դրական քայլ էր:
3. **Անհավասար պայմաններ մասնաձյուղերի և դուստր ընկերությունների համար**
- Մասնաձյուղերի աշխատակիցները ազատվել են աշխատանքի թույլտվություն հայցելու պարտականությունից, մինչդեռ դուստր ընկերությունների աշխատակիցները՝ ոչ, ինչը ստեղծում է անհավասար պայմաններ:
4. **SS ոլորտի արտոնություններ**
- Օտարերկրյա SS մասնագետների համար սահմանված հարկային արտոնությունները Հայաստանը դարձնում են գրավիչ, բայց ստեղծում են անհավասարություն՝ ՀՀ քաղաքացիների նկատմամբ, մասնավորապես ի տարբերություն 20 տոկոս եկամտային հարկ վճարող ՀՀ քաղաքացիների՝ օտարերկրացիները վճարելու են մոտ 8 տոկոս, ինչը դրդում է SS ընկերություններին այլ հավասար պայմաններում աշխատանքի ընդունել օտարերկրացի, այլ ոչ տեղացի մասնագետների:

Քաղաքականության փոփոխության չկիրառվող օրինակ՝ նշանակալի ավանդի դիմաց քաղաքացիության շնորհումը

Այս օրենսդրական փոփոխությունը թույլ է տալիս այն անձանց, ովքեր «նշանակալի ավանդ» ունեն ՀՀ տնտեսության կամ այլ ոլորտներում, ստանալ քաղաքացիություն:

Մակայն այս նախաձեռնությունը իրականություն չդարձավ՝ ենթադրաբար տարբեր գերատեսչությունների հակասական շահերի պատճառով: Այս օրինակը ցույց է տալիս, որ նման կարևոր նախաձեռնությունները պետք է բխեն համապարփակ միգրացիոն ռազմավարությունից, որը պետք է մշակի չեզոք մարմինը՝ Միգրացիոն ծառայությունը:

Առաջարկություններ

Մշակել համապարփակ միգրացիոն քաղաքականություն՝ պատասխանելով հետևյալ հարցերին՝

1. Որ օտարերկրացիներն են անհրաժեշտ Հայաստանին:

- Հայաստանի ժողովրդագրական և տնտեսական զարգացման տեսանկյունից անհրաժեշտ է հստակ ձևակերպել, թե ինչ տեսակ օտարերկրացիներ են նպաստելու երկրի զարգացմանը

ա. Ձեռնարկատերեր. Հայաստանը կարիք ունի ձեռնարկատերերի, որոնք կարող են խթանել տնտեսական ակտիվությունը և ստեղծել նոր աշխատատեղեր: Առաջնահերթություն պետք է տրվի այն ձեռնարկատերերին, որոնք.

- Արդեն ապացուցել են իրենց ձեռնարկատիրական հմտությունները իրենց անձնական կապիտալով և փորձով:
- Գործում են տնտեսական տեսանկյունից արդի կարևորություն ունեցող ոլորտներում, օրինակ՝ նորագույն տեխնոլոգիաներ, բարձր տեխնոլոգիաներ, գյուղատնտեսական նորարարություն:

բ. Ներդրողներ. Ներդրումները կենսական նշանակություն ունեն Հայաստանի տնտեսության զարգացման համար: Կարևոր է սահմանել այն ոլորտները, որտեղ ներդրումները կունենան առավելագույն ազդեցություն: Ոլորտային առաջնահերթությունները կարող են ներառել.

- Անշարժ գույքի շուկա՝ հատկապես սահմանամերձ կամ սոցիալապես անապահով շրջաններում:
- Կապիտալի շուկա կամ պետական պարտատուներ:
- Շրջաններ, որտեղ բարձր է գործազրկության կամ աղքատության մակարդակը:

գ. Աշխատողներ. Պետք է որոշել՝ արդյոք Հայաստանի աշխատաշուկային անհրաժեշտ են միայն որակավորված մասնագետներ, թե նաև՝ որակավորում չունեցող աշխատողներ: Որակավորված աշխատողները կարող են լրացնել մասնագետների դեֆիցիտը ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում (օրինակ՝ ՏՏ, բժշկություն, կրթություն): Միևնույն ժամանակ որակավորում չունեցող աշխատողները կարող են իրենց ներդրումն ունենալ այն ոլորտներում, որտեղ իրենց պահանջարկը բարձր է (օրինակ՝ շինարարություն, գյուղատնտեսություն): Պետք է բերալավվեն այն մեխանիզմները, որոնք օգտագործվում են հավասակշռելու համար գործատուների էժան աշխատուժե ներգրավելու շահը և ՀՀ քաղաքացիների՝ արդարացի վարձատրության իրավունքը:

դ. Ֆրիլանսերներ և թվային արտագնա աշխատողների (digital nomad): Ժամանակակից տնտեսության պահանջներին համահունչ՝ Հայաստանը պետք է գնահատի թվային արտագնա աշխատողների և ֆրիլանսերների ներգրավման հնարավորությունը:

2. Ինչ քայլեր է պատրաստ ձեռնարկել Հայաստանը՝ օտարերկրացիներ ներգրավելու համար:

- Աշխարհի երկրների մեծ մասը մրցակցում է «բարձրարժեք» օտարերկրացիների համար՝ միևնույն ժամանակ խուսափելով «ցածրարժեք» օտարերկրացիների ներհոսքից: Հայաստանը պետք է հստակեցնի իր քաղաքականությունն այս ուղղությամբ՝ միջազգային մրցակցությանը դիմանալու համար:
- Հայաստանը պետք է պատրաստ լինի առաջարկել երկարաժամկետ կամ մշտական կացության կարգավիճակ և քաղաքացիություն այն օտարերկրացիներին, որոնք համապատասխանում են երկրի պահանջներին:
- Օտարերկրացիներին պետք է տրամադրվեն հարկային արտոնություններ, օրինակ՝ արտերկրում ստացված եկամուտների մասով հարկերից ազատելու միջոցով:

3. Որ օտարերկրացիներին և ինչ պայմաններով է Հայաստանը շնորհելու քաղաքացիություն:

ա) Քաղաքացիության շնորհման հիմնական սկզբունքները

Պետք է սահմանվեն հստակ չափանիշներ, որոնք կկարգավորեն քաղաքացիության շնորհումը: Մի կողմից, կարևոր է ստեղծել միջավայր, որը կգրավի և կմոտիվացնի այն օտարերկրացիներին, ովքեր կարող են նպաստել Հայաստանի տնտեսական, ժողովրդագրական և մշակութային զարգացմանը: Մյուս կողմից, անհրաժեշտ է ապահովել Հայաստանի բնակչության մշակութային միասնությունը:

բ) Քվոտաների սահմանում ըստ կատեգորիաների և ազգությունների

Պետք է քննարկվի՝ արդյոք նպատակահարմար է սահմանել քվոտաներ կացության քարտերի և քաղաքացիությունների համար՝

1. Ըստ դիմորդների կատեգորիաների (օրինակ՝ ներդրողներ, ձեռնարկատերեր, գիտնականներ, մշակույթի գործիչներ):
2. Ըստ ազգությունների կամ աշխարհագրական ծագման:

գ) Ազգությամբ հայերի և ազգային փոքրամասնությունների տարբերակում

Կարևոր է հստակեցնել պետության դիրքորոշումը՝

1. Ազգությամբ հայերի նկատմամբ, որոնք ունեն պատմական և մշակութային կապեր Հայաստանի հետ:
2. Ավանդական ազգային փոքրամասնությունների նկատմամբ, որոնք ունեն երկարատև պատմական ներկայություն Հայաստանում:
3. Այլ ազգությունների նկատմամբ, որոնք չեն հանդիսանում ավանդական փոքրամասնություններ:

դ) Բաց կամ փակ միգրացիոն քաղաքականություն

Հայաստանը պետք է հստակեցնի՝

1. Արդյո՞ք իր միգրացիոն քաղաքականությունը խրախուսում է «արժեքավոր» օտարերկրացիների ներգաղթն ու ինտեգրումը՝ առաջարկելով հստակ ճանապարհ մշտական ռեզիդենտ և քաղաքացի դառնալու համար:
2. Թե՞ այն «փակ» քաղաքականություն է վարում, որը օտարերկրացիներին դիտարկում է միայն որպես ժամանակավոր միգրանտներ՝ առանց մշտական կացություն կամ քաղաքացիություն ստանալու հեռանկարների:

4. Կացության կարգավիճակի և քաղաքացիության տրամադրման կամ մերժման հարցերը պետք է վերապահել Միգրացիայի ծառայությանը:

- Որպես չեզոք և մասնագիտացված մարմին՝ այն առավել ունակ է մշակել և իրականացնել միգրացիոն քաղաքականությունը՝ ամբողջական տեսանկյունից՝ հաշվի առնելով ինչպես միգրացիայի դրական ազդեցությունները (օրինակ՝ տնտեսական զարգացում), այնպես էլ հնարավոր բացասական հետևանքները (օրինակ՝ ազգային անվտանգության ռիսկեր):
- Ներկայումս կացության կարգավիճակ կամ քաղաքացիություն տրամադրելու վերաբերյալ որոշումները փաստացի կայացվում են ԱԱԾ-ի կողմից, ինչը տրամաբանական չէ, քանի որ ԱԱԾ-ն պատասխանատու է բացառապես ազգային անվտանգության ապահովման համար և չի կարող հանդես գալ որպես չեզոք մարմին: ԱԱԾ-ի դերը պետք է սահմանափակվի խորհրդատվական եզրակացություն տալով այն մասին, թե արդյոք տվյալ օտարերկրացին սպառնալիք է ներկայացնում ազգային անվտանգության համար: Միգրացիայի ծառայությունը պետք է ստանձնի ամբողջական պատասխանատվություն՝ ուսումնասիրելու կացության կամ քաղաքացիության տրամադրման համար ներկայացված փաստաթղթերը, գնահատելու, թե արդյոք դիմորդն ամբողջությամբ բավարարում է օրենքով սահմանված չափանիշներին, վերջնական որոշումներ կայացնելու՝ հիմնվելով փաստերի մանրակրկիտ ուսումնասիրության և գնահատման վրա:

Եզրակացություն

Հայաստանը, ժողովրդագրական ճգնաժամի պայմաններում, պարտավոր է մշակել և իրականացնել գրագետ և նպատակային միգրացիոն քաղաքականություն: Գլոբալ մրցակցության համատեքստում անհրաժեշտ է պայքարել լավագույն օտարերկրացիներին ներգրավելու համար, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ երկրի տնտեսական զարգացման և պաշտպանունակության ամրապնդման վրա:

Միգրացիոն քաղաքականության բացակայությունը կամ մրցակցության մեջ տանուլ տալը կարող են հանգեցնել ոչ միայն ժողովրդագրական, այլ նաև տնտեսական և ազգային անվտանգության ոլորտներում Հայաստանի դիրքերի թուլացման:

Բնակչության աճը ինքնանպատակ չպետք է լինի: Հայաստանին անհրաժեշտ են այնպիսի մարդիկ, ովքեր կարող են իրական ներդրում ունենալ երկրի զարգացման գործում՝

- Կապիտալ ֆինանսական ներդրումների տեսքով:
- Ձեռնարկատիրական հմտություններ՝ նոր աշխատատեղերի և նորարարությունների ստեղծման համար:
- Գիտելիքներ և փորձառություն՝ ռազմավարական ոլորտներում, ինչպիսիք են տեխնոլոգիաները, գիտությունը և կրթությունը:
- Աշխատուժ՝ որը կլրացնի առկա պահանջարկը՝ միաժամանակ չվնասելով տեղական աշխատաշուկային:

Միգրացիոն քաղաքականության առանցքում պետք է լինի ներգաղթյալների որակը՝ նպաստելով Հայաստանի տնտեսական աճին և հասարակական բարեկեցությանն ու անվտանգությանը: